

նաճ չեն. շա՛խն հերետիկոս չեղան, եւ Հոռմայու արողը ուղղափառ կրօնական եկեղեցին Ֆոանկարգաց : Ապա ինչէն իխսիպս արեւելեան քրիստոնեայ ազգերը, որ փափին յատուկ պատրիարգութեան տակը չեն, ի սկզբանէ անտի իրենց ազգին սեպնական պատրիարգ եւ կաթողիկոս եւ արտօնութիւն եւ իրաւասութիւն ունին, եթէ զայն վճիռները՝ որ յատկապէս Հոռմայու արողը իր կարտինալօքը ըրեր է, իրենց սովորական ծեսին կամ հինուց ունեցած արտօնութեանը, կամ քաղաքական վիճակին անյարմար ըլլալուն՝ բան բաւական ունենան եւ ջընդունին նէ, հերետիկոս պիտի սեպուին. միթէ բաւական չէ գիրենք ուղղափառ կացուցանել՝ ընդհանրական ժողովոց հաւատոյ սահմանները, զոր ունին ամբողջ, եւ միշտ հաստատուն կրպահեն : Ապա ոչ բնաւ հերետիկոս կրնայ սեպուիլ Հայոց ազգը որ ի սուրբ Լուսաւորչէ անտի պատրիարքական իշխանութիւն եւ առանձնաշնորհութիւն եւ իրաւունք ունի, որ սուրբ Սեդրեատրոս պապը ժողովով եպիսկոպոսաց ընելով՝ մշտնջենաւորապէս տուաւ անջրելի դաշամբք. որ նոյն դաշինքը կընդունիմ *սէյի* այդ գոյեճցին կրպարծենայ : Նաեւ Հայոց եկեղեցին հաստատուն եւ անփոփոխ կրպահէ հաւատոյ սահմանները, որ ի տիեզերական ժողովոց կաթողիկէ եկեղեցւոյ աւանդեցաւ : Ուստի խիստ զարմացման արժանի է՝ թէ ինչպէս կրհամարձակի մէկասանկ գոյեճցի մը առ ամեն կերպ վճիռս հոռմեական արողոյն այսպիսի մշտնջենաւոր հնազանդութիւն եւ ընդունելութիւն պահանջել յո՛ւ եւ իցէ ազգէ ընդ պարտաւորութեամբ հերետիկոսութեան. որ սրբազան փափը այդպիսի հնազանդութիւն չպահանջեր, ոչ միայն յարեւելեան ազգաց, այլ նաեւ իր յատուկ պատրիարգութեան տակը եղած ազգերէն :

cependant elle n'est pas hérétique, et le siège de Rome la considère toujours comme catholique. Pourquoi donc regarder comme hérétiques les nations chrétiennes de l'Orient qui, loin d'être sous la juridiction directe du pape, ont obtenu en particulier, dès le principe, des patriarches et des catholicos, ont joui de juridictions et de privilèges spéciaux, quand elles pensent avec raison que les décisions personnelles du siège de Rome sont contraires à leurs rites, aux privilèges qu'elles possèdent depuis les temps les plus reculés ou à leur constitution civile et que dès lors elles ne veulent pas les admettre? Ne leur suffit-il pas pour rester catholiques d'observer les articles de foi des conciles œcuméniques qu'elles possèdent dans toute leur intégrité et qu'elles observent invariablement? L'Eglise arménienne non plus ne peut donc jamais être considérée comme hérétique, elle qui possède depuis saint Grégoire l'Illuminateur le pouvoir patriarcal, les droits et privilèges que le pape saint Sylvestre lui a conférés à jamais par un contrat inviolable en présence des évêques réunis en concile, contrat que ce propagandiste ose se vanter d'admettre. En outre l'Eglise arménienne pratique dans toute leur pureté les articles de foi imposés par les conciles œcuméniques à l'Eglise catholique. Il est donc bien surprenant qu'un propagandiste vienne imposer, sous peine d'hérésie, à n'importe qu'elle nation, une obéissance absolue, une soumission perpétuelle aux décisions du siège de Rome, quand Sa Sainteté elle même, loin d'imposer cette obéissance aveugle aux nations de l'Orient, ne la demande même pas à celles qui sont placées sous sa propre juridiction.

Ա Ռ Ա Մ Ք

Ձախորդութեան մէջ բնաւ մի յուսանատիր. որ մը չէ նէ որ մը բախտին մէկ ժպիտը կհասնի, արտօնութիւններդ կփարատէ :

Քանի քանի անգամ մահաշունչ բուռն քամիները հեզասիւզ գեփիւոին առջեւը խոնարհեցան :

Քանի քանի անգամ ահագին ամպերը փարատած են առանց կարիլ մը անձրեւ իջեցընելու :

Քանի քանի անգամ եւ ոչ բոց կըսէ եւ այն ծուխէն, ուսկից ելելու կրակը գմեզ կտարսափեցընէր :

Ուրեմն ձախորդութեան մէջ համբերէ. ժամանակը հայր է սքանչելեաց :

Աստուծոյ ողորմութենէն այնչափ բարիք սպասէ զորս եւ ոչ կարող եւ համբել :